

**ԾԱՐԱԿԱՆ ՏԵՍԱՊՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՍԱԿԱՅԱԼԻ ՇՐՋԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ  
ԲԱԼԱԶԱՐԱՎՈՅՏԱՅԻՆ ՄԾԱԿԱԲՈՒՅԵՐՈՒՄ**

**ՀՀ ԳԱԱ Գ.Ա. Ղավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ**

Էկոլոգիայի խնդիրներից մեկն է ծանր մետաղների (ԾՄ) տեղաշարժի օրինականությունը ուսումնասիրումը ջուր-հող-բույս համակարգում: Ուսումնասիրվել է Հայկական առողջապահությանը (ՀԱԿ) հարող, Մեծամոր գետի ջրով ողողվող գորշ կարբոնատային վարելահողերում մշակվող բանջարանոցային մշակաբույսերում (տաքրեղ «Փող կնճիթ» սորտի, սմբուկ «Երևանի սովորական» սորտի) ԾՄ (Fe, Mn, Ti, Ni, Cu, Sn, Mo, V, Co, Cr, Pb, Zn, Ag) կուտակման առանձնահատկությունները: Ուսումնասիրված Fe, Mn, Cu, Mo, Zn, Co ԾՄ-ները անհրաժեշտ են բույսերի նորմալ աճի և զարգացման համար, սակայն նրանց անհարկի կուտակումը բույսերում ցանկալի է: Պարզվել է, որ բանջարանոցային մշակաբույսերը ունեն ԾՄ-ների կուտակման քանակական ցուցանիշների համեմատական նույն բնութագիրը: Եվ տաքրեղում, և սմբուկում ԾՄ-ների պարունակությունը ներկայացնում է հետևյալ նվազող շարքը  $Fe > Mn > Cr > Cu > Ni > Ti > Co > Mo > V > Sn$ :

Ինչպես ՀԱԿ-ի շրջակա տարածքի բնական ջրերում, այնպես էլ բանջարանոցային մշակաբույսերում ԾՄ-ների պարունակությունը տատանվում է բավականին լայն սահմաններում  $\text{p.} 10^{-1} - \text{p.} 10^{-5}\%$  մոխրում: Մշակաբույսերում ամենամեծ պարունակությամբ ( $0.1\%$  մոխրում), աչքի է ընկել երկաթը, ամենափոքր անազը ( $6 \cdot 10^{-5}\%$  մոխրում): Չնայած սնուցող միջավայրում որոշ ԾՄ-ների՝ Pb, Zn, Ag առկայությանը, մշակաբույսերում նշված ԾՄ-ները չեն հայտնաբերվել: Բացահայտվել է, որ միևնույն հողակիմայական պայմաններում մշակված տաքրեղը և սմբուկը տարրերվում են որոշ ԾՄ-ների (Mo, Ni, Cu, Cr) կուտակման չափով: Այսիդ ի հայտ են եկել նրանց կենսաբանական առանձնահատկությունները: Այդ է վկայում ԾՄ-ների կուտակման գործակիցների (ԿԳ) հաշվարկը: Տաքրեղը մոտ 3 անգամ ավելի Mo, Ni, մոտ 1.5 անգամ ավելի Cu, Cr է կուտակել, քան սմբուկը: Մի քանի ԾՄ-ների (Mo, Ni, Sn, V) ԿԳ-ների մեծությամբ մշակաբույսերը համարյա չեն տարրերվել: Co հայտնաբերվել է միայն տաքրեղում: 1 կգ օդաչոր տաքրեղում ԾՄ-ների ելանքը կազմել է 120 մգ, նույն ցուցանիշը սմբուկի համար կազմել է 100 մգ:

Բանջարանոցային մշակաբույսերում ԾՄ-ների պարունակությունը գտնվում է թույլատրելի քանակության սահմաններում և ՀԱԿ-ի տեխնածին բացասական ազդեցությունը չի հանգեցրել որևէ ԾՄ-ի անհամամասնական կտրուկ աճի:

L.M.Kalachyan, K.A.Kocharyan, M.M.Avetisyan\*

**ACCUMULATION OF HEAVY METALS IN THE VEGETABLE CROPS GROWN IN  
THE VICINITY OF ARMENIAN ATOMIC POWER STATION**

**Summary**

The peculiarities of heavy metal s(Fe, Mn, Ti, Ni, Cu, Sn, Mo, V, Co, Cr, Pb, Zn, Ag) accumulation in paper and eggplant grown in the gray carbonate soils at the vicinity of AAPS and irrigated by water from Metsamor river have been studied.

The heavy metal content in the vegetable crops can be presented by the following diminishing row:  $Fe > Mn > Cr > Cu > Ni > Ti > Co > Mo > V > Sn$ .

Pepper accumulates 2 times more Mo and Ni and 1.5 times more Cu and Cr than eggplant. Pepper accumulates about 1.2 times more heavy metals than eggplant. The AAPS doesn't have a duastic effect on heavy metal s accumulation in tested crops.